ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«24» 06 2022թ.
No 00935

«ՏՈՒՄՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ՋԱՆԻԲԵԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

(հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի, 4, 8)

Հարգելի՛ պարոն Թովմասյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2022 թվականի հունիսի 21–ի «Թիվ ՀԳ-00061/22 վարույթը կասեցնելու մասին» թիվ 225-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «3» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 30 հունիսի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2022 թվականի թիվ 225-Ա

ԹԻՎ ՀԳ-00061/22 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 21-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-00061/22 վարույթը կասեցնելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ նաև՝ **Նախարարություն**) 2022 թվականի փետրվարի 11-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ որ Նախարարության կողմից հայտարարվել են Նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2022 թվականի կարիքների համար սննդամթերքի, տնտեսական, սանիտեգիենիկ և մաքրիչ նյութերի կենտրոնացված կարգով ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Գ-3», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԳԵՏ-3», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-3», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-Վ-4», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-2», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-3», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/3-ԵԽ-4», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-ԵԽ-1», «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/7-Վ-1» ծածկագրերով «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգերը (այսուհետ միասին նաև՝ **Գնման ընթացակարգեր**): Աճուրդների ամփոփման և տվյալների ստուգման արդյունքում պարզվել է, որ տվյալ ընթացակարգերի չափաբաժիններից գերակշռող մասում առաջին տեղ զբաղեցրած մասնակից է հանդիսացել «Տումոե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ **Ընկերություն**)՝ առաջարկելով ոչ իրատեսական շուկայական արժեքից ցածր գնային առաջարկներ: Նախարարությունը նշել է, որ Ընկերության կողմից

ներկայացված հայտը թերի էր և չի համապատասխանել մրցույթի պահանջներին: Ընկերությանը տրամադրվել է շտկման հնարավորություն, սակայն համապատասխան շտկումներն Ընկերության կողմից չի կատարվել: Ուստի հայտը մերժվել է և Գնման ընթացակարգերը նորից վերահայտարարվել են: Ընկերությունը, 2022 թվականի հունվարի 19-ից ընդգրկված լինելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, կրկին մասնակցել է Նախարարության կողմից հայտարարված Գնման ընթացակարգերին:

Հանձնաժողովը 2022 թվականի մարտի 1-ին ««Տումո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 80-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-00061/22 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-00061/22 վարույթ**)՝ Ընկերության վարքագծում առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առկայության հիմքով:

Հանձնաժողովը 2022 թվականի հունիսի 14-ին ««Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Տումո», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 218-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-00753/22 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-00753/22 վարույթ**)՝ առերևույթ հակամրցակցային համաձայնության հատկանիշների առկայության հիմքով:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթը կասեցվում է, եթե՝ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում որոշման ընդունումը մինչև այլ վարչական վարույթով որոշում կայացնելը:

Վկայակոչված դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարույթը կասեցնելու Հանձնաժողովի պարտականությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1՝ այլ վարչական վարույթով որոշում ընդունելու անհրաժեշտության առկայություն.

2՝ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունման անհնարինություն:

Ընդ որում, Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթը այլ վարչական վարույթով քննվող գործի առկայության պայմաններում վարույթը կասեցվում է մինչև համապատասխան վարույթով քննվող գործով որոշում (վարչական ակտ) կայացնելը:

Վերոնշյալ համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունման անհնարինության պայմանի բովանդակությանը:

Այս կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ «վարչական ակտի ընդունման անհնարինություն» եզրույթն ենթադրում է ոչ թե վարչական ակտի ընդունման գործնական հնարավորության բացակայություն, այլ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջների պահպանմամբ վարչական ակտի ընդունման իրավական խոչընդոտների առկայություն: Մասնավորապես, վարույթի արդյունքում ակնկալվող

վարչական ակտի ընդունման անհնարինությունը ենթադրում է Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթի և Հանձնաժողովի կողմից իրականացվող այլ վարույթով քննվող գործի այնպիսի փոխկապվածություն, որի առկայության պայմաններում Հանձնաժողովի կողմից վարույթի իրականացումը հնարավոր չէ մինչև այլ վարույթով քննվող գործի շրջանակներում տվյալ գործի համար պարտադիր նշանակություն ունեցող հարցի կարգավորումը:

Տվյալ դեպքում թիվ ՀԳ00753/22 վարույթով քննարկվում է Նախարարության կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում Ընկերության, «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» և «Խաչմիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից դրսևորած վարքագծերում հակամրցակցային համաձայնության հատկանիշների առկայության հարցը, որպիսի պայմաններում թիվ ՀԳ-00061/22 վարույթով որոշում կայացնելն անհնար է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 65-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կասեցնել թիվ ՀԳ-00061/22 վարույթը մինչև թիվ ՀԳ-00753/22 վարույթով վարչական ակտի կայացումը:

2" Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հունիսի 21
Երևան